

ՄԻՔԱՅԵԼ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

**ՆԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵՆՈՐՈԳՈՒՄՆԵՐԻ ԵՐԵՔ ՆԱԽԱԳԾԵՐՈՂ ԵՒ
ՌՈՒՄԱԿԱՆ ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ 1913 Թ.**

1912թ. աշնանը հայկական բարենորոգումների խնդիրը դարձավ Կոնստանդնուպոլսի քննարկման առարկա: Ռուսական կառավարությունը, հաշվի առնելով մերձավորարևելյան իր ծրագրերում հայկական հարցի կարևորությունը, հանդես եկավ արևմտահայերի շահերի պաշտպանությամբ: 1913 թ. հունվարի 18-ին Յարսկոյե Սեյմում Նիկոլայ Երկրորդը, ընթերցելով Ամենայն հայոց հաթոդիկոս Գևորգ Վինգերթոյի խնդրագիրը և ծանոթանալով վարչապետ Վ. Կոկովցովի զեկույցին, հրահանգեց՝ Բալկանյան պարերազմի ավարտից հետո Կոնստանդնուպոլսի հետ միասին քննարկել հայկական բարենորոգումների խնդիրը¹:

Մինչև պարերազմի ավարտը ռուսական դիվանագիտությունը կարևորում էր երուսական հասարակական կարծիքը հոգուր հայկական հարցի քրամադրելու գործընթացը: Այդ նպատակով էլ արագործնախարար Ս. Սագոմովը Գևորգ Վինգերթոյի պատվիրակ Մովսես Եպիսկոպոսին խորհուրդ տվեց Երուսալում ունենալ հարուկ պատվիրակություն²: Անսալով Ս. Սագոմովի խորհրդին՝ Գևորգ Վինգերթոյ հայրապետը «հայ բարեգործական ընդհանուր միության» նախագահ Պողոս Նուբար փաշային հանձնարարեց սրանձնել ազգային պատվիրակության ղեկավարի դերակարարությունը³:

Հայկական հարցի նկարմամբ ռուսաց դիվանագիտության բարյացակամ դիրքորոշումը և ազգային պատվիրակության սրելծումը հայ ժողովրդի քարբեր հարվածների մոք հուսառար ակնկալիքներ ձնեցին: Երկրագնդի ամենաքարբեր մասերում բնակվող հայերը կազմում էին Կոնստանդնուպոլսի ուղղված անհարական ու հավաքական աղերսագրեր, մշակում հայկական բարենորոգումների բազմազան ծրագրեր: Մինչդեռ Բալկանյան երկրների ժողովուրդները, ապավինած իրենց գեներին ու հավաքին, ազաքարգրում էին իրենց հայրենիքը, հայկական շրջանները խնդրագրեր էին ուղարկում Երուսալ և օգնություն աղերսում:

Պողոս Նուբարի առջև ծառացավ դժվարին խնդիր՝ կանգնեցնել այս հոսանքը և սրելծել մեկ միասնական ծրագիր: Այլապես կսրելծվեր այն կարծիքը, «թե հայերն իրանք ևս չգիքրեն, թե ինչ են խնդրում կամ պահանջում»⁴: Ուսրի ազգային պատվիրակությունը Պողոս Նուբարի փաշայի գլխավորությամբ սրելծեց հարուկ դիվան, որը, համակարգելով հայկական շրջանների առաջարկները, մշակեց հայկական բարենորոգումների միասնական ծրագիր: Ազգային պատվիրակության մշակած նախագիծն ամբողջովին հիմնվում էր 1878 թ. Բեռլինի վեհաժողովի և 1895 թ. հայկական բարենորոգումների Մայիսյան ծրագրի վրա: Պողոս Նուբարն այն կարծիքին էր, որ բարենորոգումների չափավոր ծրագրի պահանջները

1 Տե՛ս Արխիվ քնեքնի քոլիտիկի Րոսսիյսկոյի իմքերի(ԱՅՔՐԻ), ֆ. <<Քոլիտարխիվ 1913թ.>>, ց. 482, գ. 3460, թ. 29:

2 Տե՛ս Մ. Մաշքոցի անվան Մարենադարան, ֆ. Կաթ. դիվան, ց. 20, թղթ. 238, վալ.164:

3 Տե՛ս Հայաստանի Ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 57, ց. 5,գ. 27, թ.1-2

4 «Մշակ», 01.02.1913:

ավելի դյուրին կլինի երիտթուրքական կառավարությանն ընդունելի դարձնել, քանզի դրանք արդեն վավերացվել էին 1895թ. հոկտեմբերի 20-ի սուլթանական հրովարպակով: Ազգային պարվիրականության նախագիծը բաղկացած էր յոթ հոդվածներից, որոնք նախատեսում էին. ա) հայկական վիլայեթների համար տերությունների համաձայնությամբ, սուլթանի կողմից նշանակել երոսպացի կոմիսար, բ) ստեղծել տերությունների կողմից կազմված մշտական հանձնաժողով, որը կվերահսկեր բարենորոգումների իրագործումը, գ) հիմնել հավասար թվով հայ և մահմեդական ներկայացուցիչներից կազմված նահանգային ընդհանուր ժողով, դ) կազմավորել տեղական ոստիկանություն, ե) իրագործել դպրական և ֆինանսական բարենորոգումներ, զ) հատուկ վարչության միջոցով փոխհատուցել հողային բռնագրավումները, է) քրդական և այլ թափառական ցեղերի դեմ ձեռնարկել հակակշռող միջոցներ⁵:

Ազգային պարվիրականության նախագիծը թեև չափավոր, բայց իրապեսական էր, քանզի դուրս չգալով թուրքական գործող օրենսդրության շրջանակներից՝ հենվում էր արդեն միջազգայնորեն ընդունված և սուլթանի կողմից վավերացված իրավական դրույթների վրա: Այսուհանդերձ Պողոս Նուբարի նախագիծը չարձալ միասնական և շրջանառության մեջ չդրվեց: Բանն այն է, որ Կ. Պոլսի ռուսական դեսպան Մ. Գիրսը պարբիարքարանին առաջարկեց իրեն ներկայացնել հայերի համար բարենորոգումների ընդունելի նախագիծ: Պարբիարքարանի հատուկ հանձնախումբը՝ Եղիշե արք. Դուրյանի, Սյուրփան Գարայանի, Ռական Մարտիրոսյանի, Գրիգորիս վարդապետ Պալաքյանի, Լևոն Տեմիրճիպաշյանի, Վահան Փափագյանի անդամակցությամբ, կազմեց «Նայաբնակ նահանգների բարենորոգումների նախագիծ»՝ բաղկացած առաջաբանից և քսանմեկ հոդվածներից: Պարզվեց, որ նախագծի առանցքային հոդվածների շուրջ կան տրամադրված հակադիր դիրքորոշումներ պարբիարքարանի և ազգային պարվիրականության միջև:

Պարբիարքարանի նախագծի առաջին հոդվածն առաջարկում էր հայկական նահանգի գործադիր իշխանությունը հանձնել «երոսպացի բարձր կոմիսարի մը՝ նշանակված մեծ տերություններ և վառերացում սուլթանի կողմէ»⁶: Պարբիարքարանը նախատեսում էր երոսպացի կոմիսարին վերապահել հայկական նահանգի վարչական, դպրական, ֆինանսական և այլ պաշտոնյաներ նշանակելու և պաշտոնանկ անելու բացառիկ իրավունքը: Երոսպացի կոմիսարն իրավունք էր ունենալու հրապարակել կանոնադրեր, որոնք պետք է կայսրության ընդհանուր օրենքները համապատասխանեցնեին տեղական պայմաններին: Նախագիծը երոսպացի կոմիսարին արքունում էր տեղական ժողովուրդների լեզվի, տնտեսական ու մշակութային զարգացման առանձնահատկություններից բխող նոր օրենքներ հրապարակելու իրավունք: Երոսպացի կոմիսարի այս իրավունքները նախատեսված չէին թուրքական օրենսդրությամբ:

Պարբիարքարանի նախագիծը առանձնակի կարևորություն էր տալիս երոսպական վերահսկողությանը: «Երոսպական պետությունները, - ասված էր նախագծում, - հառաքար կստանան ներկայ նախագծի պարունակած հիմնական տրամադրություններու հոգը, և այս բարենորոգումներու կատարման անմիջական հսկողությունը կյանձնեն անոր, որուն

5 Տե՛ս ՆԱԶ, ֆ. 57, ց. 5, գ. 34, թ. 23:

6 Վ. Փափագյան, Իմ յուշերը, հ. 2, Բեյրութ, 1952, էջ 545:

ամենէն արակեր կհամարեն զայն յանձն առնելու համար»⁷: Ոչ ոքի համար զաղարկիք լինել չէր կարող, որ այդ պետությունը Ռուսաստանն էր:

Պարբիարքարանի նախագիծն աչքի էր ընկնում մի շարք պահանջների արմարականությամբ: Նրա սրելոծման մեջ կարևոր դեր էր խաղացել ռուսական դիվանագիտության բարյացակամ դիրքորոշման հետ կապված արեմտահայերի ոգևորությունը: Նրանում ամփոփված էին ավելի շարք արեմտահայության ցանկություններն ու երազանքները, քան թե այն, ինչ րվյալ պահին կարելի էր ձեռք բերել: Նույնիսկ ծրագրի հեղինակները չէին հավատում դրա իրագործմանը: Դրանով պետք է բացատրել այն հանգամանքը, որ նախագծի 20-րդ հոդվածն առաջարկում էր Կերությունների և թուրքական կառավարության ներկայացուցիչներից կազմել հանձնաժողով, որը պետք է պարբիարքարանի նախագծի հիման վրա Արեմտյան Նայաստանի համար հարուկ կանոնագիր մշակեր: Գրիգոր Զոհրապը, քննարկելով նախագիծը, գրում էր. «Մէկ հայկական շրջան, մէկ ընդհանուր ժողով, մէկ ընդհանուր կառավարիչ: Ասկէ մինչեւ հոն հասնէինք՝ հեռաւորութիւնը խիստ մեծ էր... խելքը գլուխը եղողը կընդունէր, որ արիկա աւելի մշտական հայկական իղձ մը կներկայացնէ, քան թէ իրապէս ու գործնապէս ձեռք բերուելիք բան»⁸:

Ազգային պարվիրակության նախագահ Պողոս Նուբար փաշան իր անհամաձայնությունը հայրնեց նախագծի երկու առանցքային հոդվածներին: Նախ՝ հայկական նահանգի գլխավոր կոմիսարը պետք է նշանակվեր ոչ թե երոպական երկրների, այլ Բ. Դեան կողմից՝ Կերությունների համաձայնությամբ և երկրորդ՝ վերահսկողության իրականացման ձևը անհրաժեշտ էր վերապահել երոպական երկրներին: Այս երկու հոդվածների շուրջ պարբիարքարանի և պարվիրակության միջև պարակարծությունն այն աստիճան սրվեց, որ Պողոս Նուբարը նույնիսկ սպառնաց թե կհրաժարվի իր պաշտոնից, դիմեց Կաթողիկոսին որպեսզի վերջինս ստիպի պարբիարքարանին հրաժարվելու վերահսկողությունը Ռուսաստանին հանձնելու առաջարկից⁹: Իր հերթին պարբիարքարանը դիմեց Կ.Պոլսի ռուսական դեսպանին որպեսզի վերջինս արտաքին գործերի նախարարության միջոցով ազդի Պողոս Նուբարի վրա¹⁰: Տարակարծությունները վերացնելու համար Փարիզ գործուղվեց պարբիարքարանի ներկայացուցիչ Վահան Փափազյանը, որն ըստ էության ձեռնունայն վերադարձավ: Անարդյունք ավարտվեցին նաև ՏՅԴ կուսակցության կողմից Փարիզ գործուղված բժիշկ Նակոր Զավրիյանի հանդիպումները Պողոս Նուբարի հետ: Փաշան անդրդվելի էր, քանզի քաջածանոթ էր միջազգային իրադրությանը և թուրքական գործող օրենսդրությանը:

1913 թ. ապրիլի 7-ին պարբիարքարանը, անսրեսելով Պողոս Նուբարի դիտողությունները՝ իր կազմած նախագիծը հանձնեց Կ.Պոլսի ռուսական դեսպանությանը: Միաժամանակ դեսպան Մ.Գիրսին հանձնվեցին հայկական վիլայեթների բնակչության վիճակագրությունը, Նակոր Զավրիյանի՝ Նայկական հարցի պարմությունը ներկայացնող երկու գրությունները, դաշնակցության կազմած բարենորոգումների նախագիծը և Գրիգոր Զոհրապի՝ Սվազի վիլայեթի մասին աշխարհությունը:

⁷ Անդ, էջ 571:

⁸ «Նաիրի», մայիս 1975, թ. 46-50, էջ 4:

⁹ Տե՛ս ՄԱԿ, ֆ. 57, ց. 5, ք. 34, թ. 21:

¹⁰ Տե՛ս АВПРИ, ф. «Посольство в Константинополь», ց. 517/2, ք. 3728, թ. 46:

Անհրաժեշտ է նշել, որ բացի ազգային պարվիրակությունից և պարրիարքարանից հայկական բարենորոգումների ծրագրեր կազմել էին նաև Մոսկվայի ու Պետերբուրգի հայկական կոմիտեները, Թ-իֆլիսի հայոց ազգային բյուրոն, Էջմիածնի կաթողիկոսությունը, հնչակյան ու դաշնակցական կուսակցությունները: Այս ծրագրերն աչքի էին ընկնում բազմաթիվ ու բազմաբնույթ առաջարկներով: Անշուշտ, ազգային բոլոր հիմնարկներն ու կուսակցություններն էլ կարող էին ունենալ սեփական նախագիծ, բայց վրանգավորն այն էր, որ դրանք դրվում էին շրջանառության մեջ: Ռուսաց դեսպանատան առաջին թարգման Անդրեյ Մանդելշտամը հարկադրված էր իր մոտ հրավիրել պարրիարքարանի ներկայացուցչին և պարզաբանություն պահանջել: Ռուսաց դեսպանությունը հայտնում էր, որ Կաթողիկոսի դիմումի հիման վրա ռուսական ցարը պարզապես ցանկացել է իմանալ արևմտահայոց պահանջները՝ գրավոր և ծրագրի տեսքով: Այդ նպատակով դեսպանը դիմել է պարրիարքարանին որպես թուրքահայերի իրավասու ներկայացուցչի, առաջարկելով իրեն ներկայացնել արևմտահայոց պահանջները, որպեսզի դրանք ուղարկվի իր կառավարությանը: «Տայերը, - ասաց Ա. Մանդելշտամը, - իրենց դատին յաջողության համար, պէտք է որ մէկ ծրագիր և մէկ ուղղութիւն ունենան, մինչդեռ հիմա պարրիարքարանը մէկ ծրագիր կը պարբարսէ, դաշնակցականները ուրիշ մը, Նուբար փաշա՝ երրորդ մը և թերևս Կաթողիկոսն ալ բարեփոխեալ չորրորդ մը ներկայացնէ»¹¹:

Տեղեկանալով, որ պարրիարքարանն արդեն ռուսական դեսպանատուն է ներկայացրել իր նախագիծը, Պողոս Նուբար փաշան 1913 թ. ապրիլի 22-ին Գետրգ Նինգերոդին ներկայացրեց հրաժարականի դիմում: Ազգային պարվիրակության ղեկավարը համոզված էր, որ պարրիարքարանի գործելակերպը չափազանց վրանգավոր է, քանզի բանակցությունների հաջողության համար «երկու հաուսարքիմ գլուխ և փնօրիմութիւն, մին ի Պոլիս և միւսն Եւրոպա, անկարելի է: Չափազանց ցաւալի, նոյնիսկ աղերալի պիտի ըլլայ, եթէ պէտքիւնք հասարարին կամ հասկնան, որ հայոց մէջ անհամաձայնութիւն ծագած է»¹²:

Իրադարձությունների վրանգավոր ընթացքը կասեցվեց ռուսական դիվանագիտության միջնորդությամբ: Ուսումնասիրելով պարրիարքարանի նախագիծը, ինչպես նաև դրա հետ միասին Պետերբուրգ առաքված մյուս փաստաթղթերը, ռուս դիվանագետները գտան, որ պարրիարքարանի նախագիծը ընդհանուր առմամբ Ռուսաստանի համար անընդունելի դրույթներ չի պարունակում: Միաժամանակ ռուսաց դեսպանը նրբանկատորեն հասկացրեց, որ դժվար կլինի թուրքական կառավարությանն ընդունել տալ հարկապես այն պահանջները, որոնք դուրս էին գալիս թուրքական գործող օրենսդրության շրջանակներից: Դեսպան Մ. Գիրսը պարրիարքարանի ներկայացուցիչներ Գրիգոր Զոհրապին և Լեոն Տեմիրճի-պաշյանին առաջարկեց փոխել եւրոպացի կոմիտարի նշանակման կարգը, իսկ վերահսկողության ձևը թողնել տերությունների հայեցողությանը¹³: Փաստորեն ռուսաց դեսպանը նախագծի երկու հոգվածների վերաբերյալ առաջարկում էր ճիշտ այն ձևը, ինչն այդքան համառորեն պաշտպանում էր Պողոս Նուբար փաշան:

Սակայն պարրիարքարանի կողմից փոփոխություններ կատարելու անհրաժեշտությո-

11 Էջմիածնի Մայր փառարի դիվանատուն, վավ. 288, էջ 42-43:

12 ՆԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 34,թ. 10:

13 Տե՛ս անդ., թ. 3:

յունն աստիճանաբար վերացավ: Ռուս դիվանագետները նույնիսկ հարկ չհամարեցին գրավոր ներկայացնել իրենց դիտողությունները և չառաջարկեցին կազմել բարեփոխյալ տարբերակ: Միայն մայիսի վերջերին մասնավոր հանդիպումների միջոցով պարբերաբարանի ներկայացուցիչները հասկացան, որ ռուսական դեսպանությունը մշակում է հայկական բարենորոգումների նախագծի սեփական տարբերակ: Ռուսական դիվանագիտությունը նախապես կարծում էր, որ հայկական բարենորոգումների խնդիրը հնարավոր էլինի լուծել միայն Անտանտի երկրների միջև համաձայնություն կայացնելու և նախագիծը երկրորդ փուլի կառավարությանը պարտադրելու միջոցով: Բայց րեանելով, թե Նայկական հարցում ինչպիսի շահախնդրություն է ցուցաբերում գերմանական դիվանագիտությունը, ստիպված էր փոխել մարտավարությունը: Ակնհայտ էր, որ Օսմանյան կայսրությանը բարենորոգում պարտադրել հնարավոր էլիներ Եռյակ դաշինքի հետ ընդհանուր համաձայնություն կայացնելուց հետո միայն: Եւ երբ պարզվեց, որ Գերմանիան ցանկանում է բարենորոգումներ անցկացնելու առաջարկությամբ պաշտոնապես դիմել երկրորդ փուլի կառավարությանը, այսինքն՝ նախաձեռնությունը վերցնել իր ձեռքը, ռուսական դիվանագիտական շրջանները եզրակացրին, որ անհրաժեշտ է անմիջապես հանդես գալ, այլապես հապաղումը հավասարագոր էլիներ պարտության: Ռուսաստանի արագորձնախարարության արեւելյան բաժնի փնտրեն իշխան Ս. Տրուբեցկոյը խոստովանում էր. « Գերմանիան վճռած էր հարցը ինքը ձեռք առնել և առաջարկել միւս պետություններուն անով զբաղիլ: Մենք թոյլ չտուինք, որ ինիցիատիվը մեր ձեռքէն ելնէ»¹⁴:

Մարտավարության փոփոխությունը ինքնին ենթադրում էր ունենալ սեփական նախագիծ, որը մյուս պետություններին կգրկեր Ռուսաստանի հետ հավասար ձայն ունենալու հնարավորությունից և վերջնականապես կամրապնդեր Նայկական հարցի նախաձեռնողի դերակատարությունը: 1913 թ. հունիսի 5-ին ռուսական դեսպանատուն այցելած պարբերաբարանի պատվիրակի պաշտոնությունն այն էր, որ ռուսներն այս մարտավարությամբ «գործի տեղը և իրաւասուն կուզին դառնալ, գտնէ միւս պետութիւնները իրենց հաւասար ձայն ունենալէ կուզին գրկել»¹⁵:

Կար մի կարեւոր հանգամանք էւս: Ռուսական անունը կրող նախագիծը կայսերական դիվանագիտությանը հնարավորություն կտար Կ.Պոլսի Նայոց պարբերաբարանը հետո պահել Օսմանյան կայսրությունը մասնաւոր թուրքական մեղադրանքներից: Պատահական չէ, որ ռուսաց դեսպանատան առաջին թարգման Անդրեյ Մանդելշտամը պարբերաբարանի ներկայացուցիչներին զգուշացնում էր. «Գործի յաջողությունը կպահանջէ, որ այսուհետքէն ոչ մի ծրագրի խնդիր չհանւէր և չյայտնւէր թէ ծրագիր ներկայացուած է կամ պիտի ներկայացուի...»¹⁶:

Ռուս դիվանագետները նոր ծրագիր կազմելու անհրաժեշտություն չէին տեսնում: Նրանք կարծում էին, որ բավարար էլին, եթե պարբերաբարանի նախագծում փոփոխվեն թուրքական գործող օրենսդրությանը հակասող հոդվածները: 1913 թ. մայիսի սկզբներից Կ.Պոլսի գերմանական դեսպանատան և պարբերաբարանի միջև շարունակական դար-

14 Էջմիածնի Մայր փառարի դիվանատուն, վավ. 288, էջ 67:

15 ՆԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 35, թ. 29^ա:

16 Անդ, թ. 29:

ձած հանդիպումներն իրադարձություններն այնքան արագացրին, որ ռուս դիվանագետները նույնիսկ ժամանակ չունեին կազմելու հայկական բարենորոգումների սեփական նախագիծ: Անդրեյ Մանդելշտամը, որ համարվում է ռուսական նախագծի հեղինակը, որքան էլ բանիմաց ու փորձառու լիներ ինքնին հասկանալի է, որ հաշված օրերի ընթացքում չէր կարող առանց ծանրակշիռ ուսումնասիրությունների և նախապես մշակված սկզբունքների հեղինակել այնպիսի ծրագիր, որը բավարարեր և՛ հայկական շրջաններին, և՛ Անտանտի դիվանագետներին: Այդ իսկ պարզաբանումն ևս իր ծրագրի հիմքում դրեց պարբիարքարանի նախագիծը, բայց և միաժամանակ խնամքով թաքցրեց այդ հանգամանքը: Կ.Պոլսի դեսպանաժողովի նախօրեին ռուսական դեսպանությունը պարբիարքարանին հուշեց առհասարակ մոռանալ իր կազմած նախագծի մասին: Դեսպան Մ.Գիրսը պարբիարքարանի պարզաբանին խնդրում էր, որ մյուս երկրների դեսպաններին «խմաց չարուի երբեք թե՛ գրառք ծրագիր մը յանձնած էք մեզի..., իսկ եթե անոնք ուզեն իմանալ ձեր բաղձանքները՝ կրնաք բացատրել **միմիայն բերանացի**, առանց ձեռքերնին ձեր կողմէն գրառք բան մը պալու: Մենք որոշած ենք հեպտել սկզբունքի մը, որին յաջողութեան համար պէտք չէ, որ հասկցուի, թե՛ հայ ազգը գրառք ծրագիր մը յանձնած է դեսպաններուն»¹⁷:

Տերությունների քննարկմանը ներկայացված նախագծում Ա. Մանդելշտամը նշում է, որ իր նախագծին հիմք են ծառայել Թուրքիայի երոսպական վիլայեթների մասին 1880 թ. օրենքի նախագիծը, հայկական բարենորոգումների 1895 թ. հուշագիրը և ծրագիրը, նույն թվականի հոկտեմբերի 20-ի սուլթանական հրովարդակը և Լիբանանի վերաբերյալ արձանագրություններն ու որոշումները¹⁸: Այնինչ դեսպան Մ. Գիրսը արագորժմախարար Ս. Սազմովին «խիստ գաղարի» վերաբերությամբ ուղղված հեռագրում հայտնում էր, որ Ա. Մանդելշտամը Կրեմլումների քաննարկմանը ներկայացվող ծրագիրը կազմել է ղեկավարվելով գերագանցապես պարբիարքարանի վերջին նախագծով¹⁹: Անձամբ Ա. Մանդելշտամը ևս 1913 թ. հունիսի 5-ին պարբիարքարանի ներկայացուցչի հետ հանդիպման ժամանակ խոստովանել է. «Մենք մյադիր ենք 95-ի ծրագիրը իբր հիմք ընդունել՝ ամբողջացնելով գայն ձեր ծրագրով»²⁰: Պարբիարքարանը, խուսափելով Նայասպան անվանումից, իր ծրագիրը գգուշորեն վերնագրել էր «Նայաբնակ նահանգներու բարենորոգումներու նախագիծ»։ Որքան էլ զարմանալի, բայց փաստ է, որ Ա. Մանդելշտամը սկզբում համարձակորեն իր արբերակը վերնագրել էր «Նայասպանում մըցվող բարենորոգումների նախաձեռնություն»²¹: Բայց Պերերբուրգից սրացված դիվանությունից հետո, երբ նախագիծը ներկայացվեց վեց Կրեմլումների դեսպանների ներկայացուցչների համաժողովին, նա վերնագրի Նայասպան անվանումը փոխել էր Անապոլիս Կրեմլինով:

Բովանդակային խմատով ռուսական դիվանագիտությունը պարբիարքարանի նախագծում կարարել էր ընդամենը երկու էական փոփոխություն: Առաջին. եթե պարբիարքարանի նախագիծը նախարեսում էր հայկական նահանգի գործադիր իշխանությունը հանձնել Երոսպայի բարձր կոմիսարին, որը պետք է նշանակվեր Կրեմլումների կողմից՝

¹⁷ Անդ:

¹⁸ Stén “Сборник дипломатических документов. Реформы в Армении”, Петроград, 1915, էջ 61:

¹⁹ Stén АВПРИ, ֆ. 113 “Канцелярия 1913г.”, g. 470, q. 114, թ. 344:

²⁰ ՆԱԱ, ֆ. 57, g. 5, q. 35, թ. 29:

²¹ АВПРИ, ֆ. “Посольство в Константинополе”, g. 517/2, q. 3730, թ. 1:

սույթանի համաձայնությամբ, ապա ժուսական քարտերակը թուրքական սույթանին էր վերապահում նահանգապետ նշանակելու իրավունքը՝ քերությունների համաձայնությամբ: Ընդամին չէր բացառում նաև երոպացի նահանգապետի փոխարեն օսմանահպարակ քրիստոնյա նշանակելու հանգամանքը: Եթե պարբիարքարանի նախագիծը բարձր կոմիտարին օժտում էր համապետական օրենքները քննական պայմաններին համապատասխանեցնելու և քննական օրենքներ ընդունելու իրավունք, ապա ժուսական քարտերակն այդ մասին լուր էր: Երկրորդ, եթե պարբիարքարանի նախագիծը հայկական բարենորոգումների իրագործման հսկողությունը բողոքված ձևով հանձնում էր Ռուսաստանին, ապա ժուսական քարտերակը վերահսկողության դերակատարությունը հանձնում էր երոպական քերություններին:

Ահա ընդամենը այս երկու փոփոխություններն էր արել Ա. Մանդելշտամը՝ դեսպան Մ. Գիրսի խորհրդով: Ընդ որում ժուս դիվանագետների փոփոխությունները նույնությամբ կրկնում էին Պողոս Նուբար փաշայի նախագծի համապատասխան հոդվածները: Փոփոխվել էին հենց այն հոդվածները, որոնք կամ նախատեսված չէին թուրքական օրենսդրությամբ, կամ այդ պահանջներն ամրագրված չէին Օսմանյան կայսրության ստորագրած միջազգային որևէ պայմանագրով: Այսինքն՝ Ա. Մանդելշտամը պարզապես մեղմացրեց հայերի այն պահանջները, որոնք դժվար կլինեին ընդունել փայ Եռյակ դաշինքին ու երկրորդական կողմին: Նունիսի 11-ի երեկոյան, երբ արդեն ավարտվել էին հայկական բարենորոգումների շուրջ անգլո-ֆրանս-ռուսական բանակցությունները, Ա. Մանդելշտամն այցելեց պարբիարքարան և պարբիարք Նովհաննես արքեպս. Արշարունուն հանձնեց վեց քերությունների դեսպանների ներկայացուցիչների համաժողովի քննարկմանը ներկայացվող նախագծի քարտերակը: Ծանոթանալով նախագծի բովանդակությանը՝ պարբիարքը կարծիք հայտնեց, որ պարբիարքարանի նախագծի համեմատ կատարվել է երկու էական փոփոխություն՝ ընդհանուր կոմիտարի նշանակման կարգը և վերահսկողության ձևը²²:

Այսպիսով Ա. Մանդելշտամը պարզապես համադրեց հայկական բարենորոգումների՝ Պողոս Նուբարի և պարբիարքարանի կազմած երկու նախագծերը և սրացավ Անվանյի երկրների համար ընդունելի քարտերակ:

Անհարաժեշտ է նշել, որ ժուսական դիվանագիտությանը հաջողվեց ոչ միայն բարենորոգումների քննարկման շրջանում, այլև հերագայում խնամքով թաքցնել պարբիարքարանի նախագծի գոյությունը: Այդ նախագծի գոյության մասին լեցին նաև հիմնահարցն ուսումնասիրող խորհրդային հայ և ժուս պատմաբանները: Պարբիարքարանի նախագիծը Նայասպանում երբեք չի հրապարակվել և չի դարձել առանձին ուսումնասիրության նյութ: Այնինչ նախագիծը արևմտահայ քաղաքական մարքի փայլուն նվաճումն է, ուր ամփոփված են արհավիրքի նախօրին արևմտահայության իդձերն ու ակնկալիքները:

²² Տե՛ս ՎԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 35, թ. 48: